

ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի
խոսքը Անկախության օրվա առթիվ
21.09.2020 թ.

ՀՀ Արմավիրի մարզի հարգելի բնակիչներ, սիրելի հայրենակիցներ,

Հայաստանի Հանրապետության 30-ամյա անկախությունը բոլորիս մեծագույն ձեռքբերումն է, պետության հիմնաքարը, պետականության հիմքը: Այս բառերը, ի հեճուկս թշնամիների, պետք է անհերքելի փաստ լինեն՝ դառնալով մեր՝ որպես ազգ ու պետություն հարավալեւու գրավականը:

Ժամանակի թելադրանքով, ցավոք, ընկճված ենք, կորացած, բայց ոչ՝ կոտրված: Հայ ժողովուրդն անցել է վերելքներով ու վայրէջքներով ուղեկցվող փշոպ ճանապարհ: Պարվով է կրել հաղթողի փիպղոսն ու առավել մեծ պատասխանատվությամբ, հարավալեւու ու հզորանալու մեծ կամքով պետք է փանի պարտության խաչը:

Վստահ եմ, որ ժամանակը կմաքրագրի ամեն ինչ և պարմության էջերում կգրվեն, թե ինչպես հայ զինվորի ոգու փոկունության շնորհիվ հայոց փոքրաթիվ բանակը 44 օր կարողացավ դիմակայել ադրբեջանա-թուրքա-ահաբեկչական եռազլուխ դևին:

Իսկ այժմ, ունենալով պատերազմի ծանր հետևանքները, պետք է մեր մեջ ուժ գտնենք վերածնվելու, պետք է մեր մեջ ուժ գտնենք ոտքի կանգնելու, շարունակելու մեր պետության, պետականության առաջընթացը:

Անհերքելի է, որ հայ ժողովուրդը պետք է հզորանա, հզորանա հանուն բոլոր նահապակ հերոսների հիշատակի, հանուն նրանց թափված արյան, հանուն նրանց երազանքների իրականացման:

Ինչ խոսք, հենց նման միջոցառումներով մենք պետք է իմաստավորենք մեր անկախությունը, առաջին հերթին մեր խոնարհումը բերենք մեր ընկած հերոսներին, որովհետև նրանք ընկել են հանուն Հայաստանի Հանրապետության, հանուն Արցախի Հանրապետության, հանուն աշխարհով սփռված հայության: Իսկ մենք՝ ապրողներս, ամեն հնարավորը պետք է անենք՝ նրանց անմահությունն իմաստավորելով մեր պետության հզորացմամբ և մեր ժողովրդի բարեկեցությամբ:

Մենք պարտք ունենք մեր հերոս փղաների առաջ: Եվ հանուն նրանց, հանուն մեր երեխաների վաղվա ապագայի պարտավոր ենք ապրել ու ապրեցնել: Քանզի

*ուժեղները չեն հանձնվում, անկախ իրողությունից՝ պայքարում են մինչև վերջ:
Իսկ մեր պայքարն արդար է, և արդարությունը միանշանակ հաղթելու է:
Ասրված պահապան հային ու Հայաստանին:*

Փառք Հայոց բանակին:

Փառք հայ ժողովրդին:

Փառք Հայաստանի Հանրապետությանը: